Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում:

Հաստատություն՝ N 45 մսուր- մանկապարտեզ

Դաստիարակ՝ Մարինե Հակոբյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան

2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ

1. Նախադպրոցականի ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման եղանակներն ու մեթոդները — էջ **4-7**

ԳԼՈՒԽ

2. Գեղագիտական դաստիարակության դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքում- էջ **8-10**

2.1 Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները- էջ **8-10**

2.2 Մանկական նկարչության զարգացման փուլերը –էջ **11-13**

ԳԼՈՒԽ

3. Ոչ ավանդական նկարչության նպատակն ու կարևորությունը- էջ **14-15**

3.1 Ի՞նչ է ոչ ավանդական նկարչությունը-էջ **14-15**

3.2 Ինչե՞րը կարող են փոխարինել վրձնին –էջ **16-18**

3.3 « Նկարչություն ավազով» , «Թելերով նկարչություն» -էջ **18-21**

Եզրակացություն- էջ 22-23

Օգտագործված գրականության ցանկ-էջ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակներն օգնում են երեխային ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Հենց այս որակների շնորհիվ է , որ երեխաների մեջ զարգանում են ճանաչողական կարողություններ և հմտություններ:

Նախադպրոցականի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումն էապես կախված է ծնողներից, հարազատներից, դաստիարակից և բոլոր նրանցից, ովքեր շրջապատում են երեխային:

Դաստիարակի առջև շատ լուրջ պահանջ է դրված՝ սաների մեջ սերմանել ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, ստեղծագործական ունակություն: Այս ամենը կիրառել ոչ ավանդական նկարչության գործընթացում , էլ ավելի բարդ է և պատասխանատու:

Նկարչությունը երեխայի համար նույնքան բնական պահանջմունք է, որքան խաղը: Երեխան նկարելով խաղում է, խաղալով՝ նկարում: Նկարչության տեսակետից թերևս հետաքրքրական է ոչ ավանդականը:

Ինչպես ասել է Պաբլո Պիկասոն՝<< **Բոլոր երեխաներն էլ նկարիչներ են, խնդիրն այն է, թե ինչպես պետք է մնալ նկարիչ , երբ դու մեծանում ես>>:**

Ոչ ավանդական նկարչությունն արդիական է բոլոր ժամանակներում , այն չունի սահմաններ ու արգելքներ: Այս մեթոդով պատկերվող առարկայի գույնը , ձևը, կառուցվածքը, մեծությունը, համաչափությունն օգնում են երեխային ոչ միայն ճանաչելու շրջակա միջավայրը, սեփական ճաշակով ու երևակայությամբ վերարտադրելու այն , այլև ձևավորում են գեղեցիկը տեսնելու , զգալու, ըմբռնելու և դրանով հիանալու կարողությունը:

Նկարչությունը հիանալի միջոց է երեխաների ստեղծագործական ունակությունների , ինքնուրույնության և մտավոր զարգացման համար: Նկարելու գործընթացում աշխատում են երեխայի տեսողական,շարժողական,մկանային , շոշափողական վերլուծիչները: Այն օգնում է նաև հաղթահարելու վախերն ու սթրեսը:

Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում իմ առջև նպատակ եմ դրել ուսումնասիրել սաների ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների խթանման գործընթացի առանձնահատկությունները: Այս նպատակի իրականացման համար վեր են հանվել և առաջադրվել հետևյալ կարևոր խնդիրները՝

- ✓ Ուսումնասիրել ինքնուրույնության և ստեղծագործական խթանման հիմնական մանկավարժական միջոցները:
- ✓ Պարզել , թե ինչպես է ազդում ոչ ավանդական նկարչությունը սաների ինքնուրույնության և ստեղծագործական խթանման վրա:
- ✓ Առանձնացնել այն խնդիրներն ու դժվարությունները, որոնք առաջանում են սաների ինքնուրույնության և նախաձեռնողականության խթանման գործում :
- ✓ Առաջարկել ինքնուրույնության, ստեղծագործական խթանման ժամանակակից միջոցներ և եղանակներ ոչ ավանդական նկարչության գործընթացում:

Այս ամենի իրականացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ , կիրառել մանկավարժական տարբեր միջոցներ, ուսուցման մեթոդներ և այլն:

Գլուխ 1. *Նախադպրոցականի ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման եղանակներն ու մեթոդները*:

Նախադպրոցական հաստատություններում սաների զարգացման, նրանց աշխարհայացքի ձևավորման նախապայմաններից գրեթե առաջնայինը բանավոր խոսքի զարգացումն է:Երեխայի համար պետք է անընդհատ ապահովել

շփման և հաղորդակցման համար լիարժեք պայմաններ, հարկավոր է թույլ տալ , որ երեխան իր մեջ կուտակված երևակայությունները, պատկերացումներն ու երազանքներն անպայման արտաբերի: Այսպես մենք չենք նվաստացնում նրա արտահայտվելու իրավունքը, ավելին՝ երեխան ավելի արագ է ինտեգրվում սոցիալական միջավայրին ու գիտակցում իր դերն այդտեղ: Կարևոր է պայմաններ ստեղծել երեխայի խոսքի ոգեշնչման համար, ինչը նրանց խրախուսում է, իսկ խոսքն անհամեմատ ակտիվանում է:

Ծնված պահից երեխային շրջապատում են տարբեր մարդիկ, անշունչ առարկաներ: Երեխային շրջապատող իրողությունը կոչվում է միջավայր: Երեխան մեծանում և զարգանում է կոնկրետ սոցիալ-մշակութային միջավայրում, յուրացնում է տվյալ հասարակության կողմից փոխանցվող այն փորձը, որի կրողներն են այդ հասարակության հասուն ներկայացուցիչները՝ մեծահասակները:

Բանավոր խոսքի զարգացման ամենաարդյունավետ ձևն ,անշուշտ, բնական հաղորդակցումն է: Որքան զարգացած է նախադպրոցականի խոսքը, նա այնքան ավելի ինքնուրույնէ, նախաձեռնող ու ակտիվ:

Անընդհատ մտավոր գործունեություն կատարող երեխայի միտքը գնալով ավելի կազմակերպված է դառնում, հետևաբար նաև խոսքն է լինում տրամաբանված և իմաստալից: Սահուն խոսքը մտավոր բարձր զարգացման արդյունք է:

Այսպիսով, նախադպրոցականի ընդհանուր զարգացման , ինքնուրույնության ու նախաձեռնողականության խթանման , ինչպես նաև մտավոր դաստիարակության խնդիրների համակարգում առանձնանում է **խոսքի զարգացումը:**

Զրույցը բանավոր խոսքի զարգացման գործնական միջոցներից է: Նախադպրոցական մանկավարժության մեջ զրույցը դիտարկվում է որպես շրջակա միջավայրի հետ ծանոթացման, ինչպես նաև կապակցված խոսքի զարգացման ու երեխայի սոցիալականացման միջոց:

Նախաձեռնողականությունը նորարարություններ հանգեցնող մտքերի ակունքն է: **Ինքնուրույնության** համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի , մասնագիտության նախընտրությամբ և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ և այլն: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի ուղղորդել , հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար, միջանձնային շփումներում լինել բարեվարք, հանդուրժող:

Հետաքրքրասիրության բավարարումը նույնպես կարևոր նախապայման է, որ

դպրոցականը լինի ինքնուրույն: Այսպես է բավարարում իր շփման կարիքը , համալրում իր գիտելիքների պաշարը, բառային պաշարը, այլ խոսքով՝ հետաքրքրությունների բավարարումը վերջինիս իմացական ոլորտը սնուցող աղբյուր է:

Նախադպրոցական տարիքն անփոխարինելի ժամանակաշրջան է խոսքի զարգացման , սոցիալականացման , մի շարք կենսական նշանակության կարողությունների զարգացման համար:

Այս տարիքում երեխան յուրացնում է հազարավոր նոր բառեր, արտահայտություններ, սովորում է վարքագծի ու վարվեցողության կանոնները, ճանաչում է իրեն շրջապատող իրերը, առարկաներն ու երևույթները:

Դաստիարակը պետք է կարողանա պահը որսալ և սանի գործողություններին հաղորդել ակտիվություն, թույլ տա, որ երեխան ինքնուրույն լինի, նախաձեռնի խաղեր, կիսվի իր մտքերով:

Բավականին արդյունավետ են **ուսուցման գործնական մեթոդները**: Ակտիվ ուսուցման մեթոդները/փոխգործուն մեթոդներ/ նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու , սեփական կարծիք հայտնելու ,պատասխանատու որոշումներ կայացնելու , ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը:

Փաստորեն , կարելի է արձանագրել ,որ ուսուցման երեխայակենտրոն մոտեցումը

բավականին խոսուն է և դաստիարակին հնարավորություն է տալիս լինել ուղղորդող-ուսուցանողի դերում՝ խրախուսելով երեխայի ինքնուրույն ձեռքբերումները:

Այսպիսով, փոխգործուն մեթոդների կիրառմամբ աշխատանքը թույլ կտա, որ երեխան նախադպրոցական հաստատությունից դուրս՝ առանց դաստիարակի միջամտության ու անմիջական օգնության, ինքնարտահայտման, ինքնադրսևորման դժվարություններ չունենա, ինտեգրվի միջավայրին, **ինքնուրույն նկարի,** ծեփի, հաշվի, արտահայտի իր հույզերն ու զգացողությունները:

Սրանք նախադպրոցականի առաջին հաղթանակներն են, որոնց հիմքի վրա պետք է ձևավորվի ապագա դպրոցականը,անհատը, քաղաքացին:

Գլուխ 2. Գեղագիտական դաստիարակության դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքում

2.1 Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները:

Անձի գեղագիտական որակների հիմքերը դրվում են վաղ տարիքում, սակայն դրանք կազմավորվում և պահպանվում են ողջ կյանքի ընթացքում: Նախադպրոցական երեխաների դաստիարակության գործընթացում առաջատար տեղ է զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը:

Գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակն է՝ նպաստել երեխայի գեղագիտական զարգացմանը,կյանքում , արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական գնահատականի և ճաշակի ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակության հիմքում ընկած է հուզազգացմունքային ոլորտի զարգացումը: Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայաան թորձի հարստացմանը,ակտիվացնում նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:

Գեղագիտական դաստիարակության խնդիրներն ուղղված են երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը, դրանք են՝

- **Գեղեցիկի , արվեստի մասին տարրական գիտելիքների փոխանցումը**
- **Գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակությունը**
- **Գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունների ձևավորումը**
- **Գեղեցիկը ճանաչելու պահանջմունքի զարգացումը**
- **Գեղագիտական ճաշակի դաստիարակությունը:**

Հաջորդ խնդիրները նպաստում են գեղագիտական- գեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը: Գեղագիտական ուսուցմնա եղանակով իրականացվում են գեղագիտական դաստիարակաության հետևյալ խնդիրները՝

- **Նկարչական ունակությունների ձևավորումը**
- **Ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորումը**
- **Ապլիկացիայի ուսուցումը**
- **Կառուցողական ունակությունների և կարողությունների ձևավորումը**
- **Դեկորատիվ արվեստի տարրերի ձևավորումը**

Գեղագիտական դաստիրարկության հինական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի և կենցաղի գեղագիտական կողմերի հետ: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և իվերջո գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկության պահանջմունքի զարգացմանը:

Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:

Քննարկելով երեխայի գեղագիտական դաստիարակության տարբեր դիտարկումները, ինչպես նաև հաշվի առնելով ներկայիս գեղագիտական դաստիարակությանը ներկայացվող պահանջներն ու նախադպրոցականի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները , նշենք դրա հետևյալ առանձնահատկությունները:

1. Գեղագիտական դաստիարակությունը երեխային գեղեցիկը զգալ տալու նպատակաուղղված գործընթաց է:
2. Այն ինչպես արվեստում , այնպես էլ կյանքում ձևավորում է անձիէ գեղեցիկը տեսնելու և ընկալելու կարողությունները:
3. Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է երեխայի ինքնուրույն ստեղծագործելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը:
4. Այն օժանդակում է նաև մարդու բարոյական որաների ձևավորմանը, հարստացնում է նրա ճանաչողությունը աշխարհի և բնության վերաբերյալ:
5. Գեղագիտական դաստիարակության ուղղվածությամբ պարապմունքները նպաստում են երեխայի մտածողության, երևակայության,կազմակերպվածության , կարգապահության զարգացմանը, հարստացնում նրա հուզազգացմունքային փորձը:

   Հետևաբար, գեղագիտական դաստիարակությունն ապահովում է յուրահատուկ կապ կյանքի և արվեստի միջև:

2.2 Մանկական նկարչության զարգացման փուլերը

Մանկական նկարչությունը պատմում է երեխայի զարգացման ընթացքի, նրա հուզական ,մտավոր, ֆիզիկական փորձառության մասին:

Մանկական նկարչություն անցնում է զարգացման իր յուրահատուկ փուլերը , որոնք համընդհանուր են, իսկ այդ փուլերից շեղումները կարող են հուշել երեխայի զարգացման բնականոն ընթացքի խաթարումների մասին :

Նկարչությունը զարգացնող դեր ունի տեսողության, շարժողական կոորդինացիայի , խոսքի , մտածողության, երևակայության համար:

Այն նաև համաձայնեցնում է միջկիսագնդային փոխազդեցությունը:

Մանկական նկարներն մասնագետների համար կարող են ծառայել որպես ախտորոշիչ և թերապևտիկ միջոց, իսկ առօրյա կյանքում նկարչությունը նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանը:

Մանկական նկարները յուրահատուկ պատմություններ են երեխայի զարգացման , հուզական վիճակի, նաև ընդհանուր հոգեբանական վիճակի մասին:

Եվ , անշուշտ, նկարչությունը պետք է լինի երեխայի առօրյա զբաղմունքների ցանկում:

Խզբզոցի փուլ- 1-3 տարեկան երեխաներ

Երեխաներին այս փուլում հետաքրքիր է նկարչության ֆիզիկական կողմը : Այս փուլում երեխան բացառապես հաճույք է ստանում ստեղծագործական գործընթացից,իսկ արդյունքը հետաքրքիր չէ:

Երեխան նկարել սկսում է անկանոն բծերից, խզբզանքներից՝բացահայտելով իր հետքը թողնելու հնարավորությունը:

Առաջին փուլում երեխան նոր-նոր է սկսում իրեն առանձնացնել շրջակա տարածությունից և ձգտում է հայտնել իր մասին իրեն հասանելի բոլոր միջոցներով:

Նախասխեմատիկ փուլ-3-4 տարեկան երեխաներ

Այս փուլում երեխաները սկսում են բացահայտել իրենց նկարած պատկերների և արտաքին աշխարհի առարկաների միջև նմանություններ և կապեր:

Երեխաները հաճախ նկարում են շրջաններ, գծեր, որոնք իրենց շրջապատում են: Հաճախ միայն երեխային է հասկանալի , թե ինքն ինչ է նկարել: Բնօրինակի հետ նմանությունը նվազագույնն է:

Սխեմատիկ փուլ-5-6 տարեկան երեխաներ

Այս փուլում երեխան սկսում է կոնկրետ պատկերներ անել ՝ օգտագործելով երկրաչափական մարմինները, հստակ տարբերակում է երկինքը հողից:

Երկինքը նկարում է կապույտ գծով, իսկ հողը՝ կանաչ գծով:

Մնացած օբյեկտները տեղակայվում են այդ կանաչ գծի վրա՝ ի տարբերություն նախորդ փուլի , երբ պատկերները կարծես օդի մեջ լինեն: Նկարի առավել

կարևոր մասերը նկարվում են ավելի մեծ՝ մնացած ավելի քիչ կարևոր մասերի հետ համեմատ:

Նկարները այս փուլում աչքի են ընկնում կառուցվածքով ու կազմակերպվածությամբ: Այս փուլում մանկական նկարներում հայտնվում է մարդը :

Դա տեղի է ունենում , երբ երեխան գիտակցում է իր ես-ը և սկսում է իր մասին խոսել առաջին դեմքով: Մարդու առաջին պատկերները շատ սխեմատիկ են՝ կան միայն գլուխը, ոտքերը և ձեռքերը:

Այս փուլում երեխան նկարում է միայն իրեն շրջապատող մարդկանց:

Երեխան նկարում է այն , ինչ գիտի , այլ ոչ թե այն , ինչ աչքերի առաջ է: Նա նկարում է այն , ինչ իր համար կարևոր է:

Գլուխ 3. Ոչ ավանդական նկարչության նպատակն ու կարևորությունը

3. 1 Ինչ է ոչ ավանդական նկարչությունը

Ոչ ավանդական նկարչությունը արվեստ է, որը հիմնված չէ ավանդույթների վրա, հավատարիմ չէ դրանց , բայց առանձնանում է իր ինքնատիպությամբ ու յուրինակությամբ: Ոչ ավանդական՝ այլընտրանքային նկարչությունը գրավում է , հիացնում, զարմացնում ու զարգացնում երեխաներին: Այլընտրանքային նկարչության ձև է, որը չունի սահմաններ և արգելքներ, որտեղ նկարչության գործիք է դառնում շրջապատում ցանկացած իր: Իվերջո, այստեղ օգտագործվում են անսովոր նյութեր, թափոններ, և ամենակարևորը՝ « անհնար» բառի համար ոչ ավանդական նկարչությունում տեղ չկա: Երեխաները կարող են պատկերել ինչ ուզում են , ինչպես ուզում են և ինչով ուզում են: Այս մեթոդը երեխաներին սվորեցնում է ազատորեն արտահայտել իրենց գաղափարները՝ առանց որևէ սահմանափակումների: Ինչպես նաև թուլանում են երեխաների վախերը, հայտնվում է ինքնավստահություն: Այն հնարավորություն է տալիս լինել ազատ , ինքնուրույն և արագորոն հասնել ցանկալի արդյունքի: Իսկ ազատ ,ինքնուրույն ստեղծագործելու հնարավորությունը շատ կարևոր է ստեղծագործական ունակությունների զարգացման գործընթացում:

Ըստ Մոնտեսորիի՝ «ինքնուրույն է այն երեխան, ով ազատ է >>:

Այլընտրանքային նկարչության միջոցով բացահայտվում է երեխաների ներաշխարհը՝ նպաստելով զարգացնել երևակայությունը, մտածելու և ստեղծագործելու ունակությունը:

Երբ երեխան սկսում է նկարել , թղթին է հանձնում այն ամենն ինչ պատկերացնում է ,բայց չի կարող արտահայտել բառերով: Նկարչության ընթացքում կատարելագործվում են հոգեկան բոլոր ֆունկցիաները՝ տեսողական, ընկալում ,պատկերացում, երևակայություն, հիշողություն , մտածողություն: Նկարչությունը նպաստում է երեխայի միջավայրի ճանաչողական գործընթացին, երեխաների գունային ճանաչողությանը և մտապահմանը:

Այն նպաստում է նաև երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:Այն նպաստավոր պայմաններ է ստեղծում անհատի ամբողջական դաստիարակության համար:

Այն ինքնարտահայտման և միաժամանակ հոգեբանական լարվածության վերացման միջոց է:

Այլընտրանքային նկարչությունը նպաստում է ինչպես ստեղծագործական մտածողության, երևակայության, մոտորիկայի զարգացմանը, այնպես էլ տարբ եր նյութերի այլընտրանքային կիրառմանը: Այդ նյութերը կարող են լինել տարբեր՝ թափոններ, թելեր, տնտեսական իրեր , բանջարեղեն, մրգեր նայն ամենն ինչ , կարող ենք պատկերացնել: Երեխաների զարմանքը, հիացմունքը, հրճվանքը սահմաններ չունի ,երբ իրենց շրջապատող ,այլ նպատակ ծառայող իրերը ,առարկաները նկարելիս կարող են փոխարինել վրձնին:

3. 2 Ինչերը կարող են փոխարինել վրձնին

Նկարել կարելի է տարբեր միջոցներով և դիրքերով ՝ հատակին պառկած, սեղանի տակ , սեղանի վրա, ափսեների, տերևների, ապակիների, սպիտակ կամ գունավոր թղթի վրա և այլն: Ոչ ավանդական նկարչության ժամանակ վրձինը կարելի է փոխարինել գունավորված մատիկներով, ճմռթած թղթով, փուչիկով, փրփուրապլաստով, թելերով,սպունգով, օճառի պղպջակներով, բամբակի փայտիկներով, կարտոֆիլով,մոմով, նեխուրի կամ հազարի կոթերով ,ավազով,աղով ,մանրաձավարով, պատառաքաղով , նաև շատ այլ միջոցներով:

Մեծ հետաքրքրությամբ ու հաճույքով են երեխաներն աշխատում թվարկված միջոցներով: Արտահայտում են իրենց զգացողությունները, տպավորությունները, պատմում, ներկայացնում են թե ինչ են նկարել, ինչով աշխատեցին, ինչ նոր գուներանգներ ստացան:

Երեխաները շատ են սիրում ավազով խաղալ ,ավազի վրա նկարչություն անել:

« Ավազով խաղն ազատագրում է արգելափակված էներգիան և ակտիվացնում մարդկային հոգեկանում առկա ինքնաապաքինման հնարավորությունները:»

Կ. Գ. Յանգ

Ավազով նկարչությունը ստեղծագործական հետաքրքիր ուղղություն է: Երեխաներն ավազի վրա հրաշքներ են արարում: Ավազի հետ խաղը ,որը հոգեբանները որպես թերապիա են օգտագործում, թույլ է տալիս ակտիվացնել երևակայությունը:

Ավազի փոխարեն կարելի է օգտագործել ցանկացած ավազանման զանգված, օրինակ՝ սպիտակաձավար,աղ,ալյուր: Ավազով երեխաները շատ հանգիստ են աշխատում ,քանի որ գիտեն ,որ պատկերը միշտ կարող են շտկել, նկարածը կարող են մաքրել և նորը պատկերել :

Ավազաթերապիան հնարավորություն է տալիս երեխային հանգստացնելու ներքին

բացասական հույզերը, չարտահայտված տագնապները: Ավազաթերապիան օգնում է արտահայտել այն մտքերն ու ապրումները, որոնք դժվար է ձևակերպել բառերով:

Ավազանկարչությունը նպաստում է անհատականացման գործընթացին, երեխաների համար ինքնարտահայտման միջոց է, ազատում է ներքին անհանգստությունից ու ակտիվացնում հիշողությունը: Երեխան դառնում է ստեղծագործ , զարգանում է երեխայի մաթեմատիկական մտածողությունը, զարգանում է մանր մոտորիկան, վերացնում վախերը:Երեխաների համար շատ հետաքրքիր , անակնկալ, նաև կախարդական նկարչություն է համարվում **մոմանկարչությունը,** նկարելու ընթացքում երեխան չի տեսնում նկարը, չի պատկերացնում իր նկարածը, որովհետև նկարում է սպիտակ մոմով՝ սպիտակ թղթին: Վերջում թուղթը գունավորելուց հետո երևում է նկարը , մոմով ներկված հատվածները չի ներկվում:

Անակնկալ նկարչություն է նաև **ջրային նկարչությունը**, երբ նկարում ենք անձեռոցիկի վրա. նոր, մաքուր անձեռոցիկը դնելով նկարված պատկերի վրա, ուրվագծում ենք նկարը , ապա դնում ջրի մեջ, քիչ հետո տեղի է ունենում հրաշք:

Անձեռոցիկը թրջելով՝ գունավորվում է ուրվագծված պատկերը:

Բավականին հետաքրքիր է նաև **դրոշմակնիքով՝ տպիչով նկարչությունը**: Երեխաները մեծ սիրով և ոգևորությամբ են աշխատում, երբ կարտոֆիլի միջոցով ստանում են տարբեր մրգերի պատկերներ:

Տարբեր գույնի հետաքրքիր , տերևաձև , ծաղկանման պատկերներ կարող ենո ստանալ **գունավորված թելերով նկարչության** ժամանակ:

Գունավորված թելերը երեխաները դնում են սպիտակ թղթի վրա ցանկացած դիրքով,ապա թղթի մի կողմը ծալում են թելերի վրա ՝ ծայրերը դուրս թողնելով:

Ձեռքի ափի օգնությամբ հարթեցնում են թուղթը և զգուշորեն հանում թելերը: Ստացվում է մի ինքնատիպ ու յուրօրինակ պատկեր:

Երեխաները կարող են նկարել ամենուր,ամեն ինչով, ամեն ինչի վրա, ազատ է նրանց մտքի թռիչքն ու երևակայությունը, իսկ այլընտրանքային նկարչության տարբերակներն ու միջոցները անթիվ են ու անսահման: Ստորև կներկայացնեմ ոչ ավանդական նկարչության պարապմունքի օրինակներ՝

3.3 « Նկարչություն ավազով», «թելերով նկարչություն»

Նկարչություն ավազով՝

Տարիքը՝ 4 և ավելի բարձր

Օգտագործվող նյութերն ու միջոցները՝ մանր ավազով արկղիկ, փայտիկներ

Նպատակը՝

- Խթանել երևակայության զարգացումը
- Սովորեցնել փայտիկով ավազի վրա պատկերներ ստանալու ձևերը
- Զարգացնել ձեռքի նուրբ և համարձակ շարժումները
- Ընդլայնել պատկերացումները ավազի հատկությունների վերաբերյալ

Ընթացքը՝

Մանկապարտեզի բակում նախապես պատրաստել ավազով նկարելու համար համապատասխան « ավազե հրապարակ» և կազմակերպել գործընթացը:

Մի արևոտ օր դուրս գալ բակ և ցույց տալ երեխաներին , թե ինչպես պետք է նկարել ավազի վրա փայտիկի օգնությամբ (գծեր,ալիքներ, շրջան , քառակուսի , թվեր և այլն)

Գործընթացը պետք է սկսել փոքր խմբերով: Նկարելու ընթացքում հետևել երեխաների աշխատանքին, տալ համապատասխան ցուցումներ, անել դիտումներ, դիտարկումներ:

Պարապմունքի վերջում երեխաներին առաջադրել հարցեր՝

1. «Փայտիկով ինչ՞ արեցինք»:
2. «Ինչ՞ կատարվեց ավազի հետ»:
3. Ինչպիսին՞ էր ավազը մինչ նկարելը:
4. Ինչ՞ եղավ ավազի հետ նկարելուց հետո:

Այսպիսով, երեխաները ծանոթանում են փայտիկի օգնությամբ ավազի վրա նկարելու ձևերին:

ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Ծնողներին առաջարկել տանը նման կերպ զբաղվել երեխաների հետ:

ԹԵԼԵՐՈՎ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Տարիքը՝ 4 և ավելի բարձր

Օգտագործվող նյութերն ու միջոցները՝

- Ալբոմի երկու թուղթ
- Տուշ կամ ջրիկ գուաշ
- Ափսե ներկի համար
- Միջին հաստության թել
- Անձեռոցիկ,պլասմասսե գդալ
- Նմուշօրինակ

Նպատակը՝

- Խթանել հետաքրքրասիրությունը
- Սովորեցնել թելերով պատկեր ստանալու ձևերը
- Զարգացնել կոկիկ աշխատելու կարողությունը
- Մշակել գուներով աշխատելու հմտություն

Ընթացքը՝

Թուղթը ծալել երկտակ ,ծալված թղթի ներսի մեկ կողմի վրա ցանկացած դիրքով դնել նախապես տարբեր գույներով ներկված թելերը /20-30 սմ երկարության/ , ծայրերը դուրս հանել :Ձեռքի ափի օգնությամբ ծալված թուղթը մի քանի անգամ հարթեցնել , այնուհետև ձախ ձեռքը դնել ծալված թղթի վրա , աջով՝ թելի ծայրը զգուշորեն ձգել դեպի դուրս: Զգուշորեն բացել թուղթը: Ստացվում են հետաքրքիր և գունավոր գրեթե նույնատիպ պատկերներ: Ստացված պատկերները նմանեցնել որևէ առարկայի կամ երևույթի:

Առաջադրել հարցեր.

1. Ինչ՞ կատարվեց թելի հետ:
2. Ինչ՞ եղավ երկրորդ թելի հետ:
3. Ի՞նչպիսին են առաջին և երկրորդ թղթի վրա ստացված պատկերները:

Աշխատանքի վերջնական տեսքը

Հետաքրքիր պատկերներ, գունավորված թելերի հետքեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինձ համար այլընտրանքային նկարչությունը երեխաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների բացահայտման գործընթացում անակնկալներով լի մի հիանալի աշխարհ է , որտեղ խոսում են ձեռքերը և ձեռքերի միջոցով երեխան արտահայտում է իր հոգեվիճակն ու տրամադրությունը:

Ոչ ավանդական նկարչությունը հնարավորություն է տալիս երեխային հանգստացնելու ներքին բացասական հույզերը, չարտահայտված տագնապները, օգնում է հաղթահարել բարդույթները, վախերն ու սթրեսները: Քանի որ ոչ ավանդական նկարչության ընթացքում երեխաների մոտ այնքան դրական հույզեր,էներգիա, հիացմունք,հրճվանք ու բարձր տրամադրություն է տիրում ,որ անհետանում են վերը թվարկված բացասական կողմերը: Հետևելով երեխաների ոգևորված աշխատանքին՝ նկատում ենք, որ ոչ ավանդական նկարչությունն օգնում է արտահայտել այն մտքերն ու ապրումները ,որոնք դժավար է ձևակերպել բառերով, այսինքն՝ երեխաների ինքնահաստատման այն միջոցն է , որը թույլ է տալիս լինել ազատ, ինքնուրույն, ստեղծագործող, ազատվել ներքին բացասական զգացմունքներից և ակտիվացնել երևակայությունն ու հիշողությունը: Արդյունքում նկարչությունը երեխային ստեղծագրծ է դարձնում՝ նպաստելով գեղեցիկը զգալու , տեսնելու,ընկալելու, ըմբռնելու և դրանով հիանալու կարողությունը: Նկարչությունը զարգացնող դեր ունի երեխայի տեսողական , շարժողական , կոորդինացիայի,

խոսքի,մտածողության, երևակայության, մտավոր ունակությունների, նյարդային համակարգի ճիշտ զարգացման գործում ,քանի որ նկարելու ընթացքում աշխատում են երեխայի տեսողական, շարժողական,մկանային, շոշափողական վերլուծիչները:

Ոչ ավանդական նկարչությունը բոլոր առումներով նպաստում է՝

- Երեխայի նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորմանը
- Գունազգացողությանը
- Երևակայության զարգացմանը
- Մտածողության զարգացմանը
- Մոտորիկայի զարգացմանը
- Խոսքի զարգացմանը

Այսպիսով,քայլ առ քայլ լուծելով առաջ քաշված խնդիրները՝ վեր հանեցինք նախագծի նպատակը:

Տեսնելով այն հետաքրքրությունը,ոգևորությունը, ուրախությունը,զարմանքի և հրճվանքի պահերը ,որն ապրում են սաները ոչ ավանդական նկարչության տարբեր միջոցների կիրառման ընթացքում, ես ինքս էլ մեծ ոգևորությամբ եմ սկսում աշխատել և անընդհատ ցանկություն է առաջանում պրպտելու, գործի դնելու վառ երևակայությունը՝ նոր մեթոդներ գտնելու, զարգացնելու ու զարմացնելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

- « Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես
- Ա.Ա. Մարության , Ա. Մ. Դալլաքյան « Նախադպրոցական մանկավարժություն»
- Մանկապարտեզի միջին և ավագ խմբերի կրթական համալիր ծրագրեր
- Նաիրա Գրիգորյան « Նախադպրոցական մանկավարժություն»
- Ժ. Ավետիսյան , Գ. Փոթիկյան « Ոչ ավանդական նկարչություն» ուսումնաօժանդակ ձեռնարկ
- С. А. Козлова, « Дошкольная педагогика »